

# ՄԱՍԻՍ

## ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

51<sup>րդ</sup> ՏԱՐԻ, ԹԻԻ 41

Գ. ՇՐՋԱՆ

12 ՀՈԿՏԵՄԲ. 1902

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մասիս շաբաթաթերթի տարեկան թատանդագիկն է Կ. Պոլսոյ համար Գառուռն ոչ. եւ գաւառներուն համար Յիսուսն ոչ., կանխիկ վճարելի: Արտասահման 12 ֆրանկ կամ 5 ռուպլի: Թղթաստրական ծախքը խմբագրութեան վրայ է: Վեցամետայ թատանդագրութիւն չընդունուիր: Թատանդագրութիւնները կը սկսին առկն ամսոյ մէկէն: Մասիս հրապարակ կ'ընէ շաբաթ առաւ: Այն թատանդակները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է խնայն խնայնեն խմբագրութեան: Ժամանակ անցնելի վերջ աշխատեալի առարկութիւնները նկատողութեան չեն առնուիր:

Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

Ձեռք կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐՍՅԻ

Հասցէ

درعليه ده آغوب ماطيوسيان مطبعه سنده «ماسيس» غزنه سى اداره سنه

ԽՄԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ (ՄԱՍԻՍ) Ի

Տպարան Յ. Մատթէոսեան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Rédaction de la Revue MASSIS

Imprimerie H. Matteosian

CONSTANTINOPLE

Բաժնեկիւն չվճարող թատանդակները լազուրդ  
չեն ընդունուիր: Գրութեան վրայ չեն ընդունուիր:

Գրաստուն ՆՇԱՆ-ՊԱՊԻԿԵԱՆ  
Կ. ՊՈԼԻՍ, 60 Էսկի-Ջապրիե Ճաշահի, 60

Հրատարակուեցաւ

ՀՐԱՆՏ Ս. ԽԱՆՃԵԱՆԻ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՄՐՈՒԹԵԱՆ

190 էջ, 16աժալ, գին 5 դր2.

Ջարդարուած բազմաթիւ լուսատիպ պատկերներով : Անհրաժեշտ ամէն գպրոցականի եւ վաճառականի :

Նոյն հեղինակին՝

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ, ՄԻՋԻՆ ԴԱՍԵՆԹԱՅԲ

240 էջ, պտկրգդ. գին 5 դր2.

Եւրոպական ամենէն համբաւաւոր եւ նորագոյն գործերու հետեւողութեամբ :

Սոյն երկու գործերու իւրաքանչիւրէն գաւառի ուսուցիչներու նմոյշ կը զրկուի 50 փարայի դրոշմաթուղթի փոխարէն :

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՏՈՔԹ. Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵՍ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 200

Կալաթա-Սերայի Լիսէին դէմ

ԴԵ. ԵՇ. ՇԲ. օրերը առաւօտեան կանուխէն մինչեւ իրիկուան ժ. 11<sup>1</sup>/<sub>2</sub>

ԲԵ. ԴԵ. ՈԼԲ. օրերը 6 էն մինչեւ 11<sup>1</sup>/<sub>2</sub>

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ՏՈՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 15

Բացի սովորական յերթին հիւանդութիւններէ՝ կը դարձանէ մասնաւորաբար, նոր մեթոտներով եւ խնամով, ստամոքսի, աղեաց, միզական ճարտարներու հիւանդութիւնները, ջղային տխրութիւնները, գաղղիական ախտերը (սիֆիլիս եւլի) եւ մտքի հիւանդութիւնները :

Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը :

ՊՐՈՒՍԱՅԻ ԽԱՎՈՒՆԵՐԸ

ԳՈՐԾԱԾԵՑԸ

ՊՐՈՒՍԱՅԻ ԽԱՎՈՒՆԵՐԸ եւրոպական. ներէն աւելի ԴԻՄԱՑԿՈՒՆ ԸՂԱՐՈՆ ԿԱՐԱԿՈՅ ԻԿԱՅ, հետեւապէս աւելի ԱԺՈՆ ԵՆ :

Ս. ՄԱՐՏԻԿԵԱՆ ԵՒ ՈՐԴԻՈՑ

ՊՐՈՒՍԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒ

ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Լաւագոյնը ըլլալու համբաւը կը վայելն 35 տարիէ ի վեր :

Դիմել

206-29, Եհնի Զաւր, Մահմուտ Փաւա, Կ. Պոլիս



ՌՕՍԻԱ — ROSSIA



ՍԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՄԲ

Ընկերութեան գրամագլուխը, ամբողջապէս վճարուած 1901 տարւոյ մէջ գտնծուած ապահովագրիներ ու տոկոս նրաշխարհութեան գումար Ապահովագրեալներուն վճարուած գումար

10,667,667 Գրամբ  
54,000.000 »  
122,000.000 »  
249,400.000 »

Կեդրոնացեղի, Լալաքիոյ փարափին վրայ, Մախմուտ հին ճեղք  
Ընդհ. Գնահ. Գործակալ  
Ա. ՀԻՒՐՈՒԻԶ  
ԹԻՍՏՈՐ ԲԵՐԱԷՆ

# ՄԱՍԻՆ

ՏՐԻ ՏԱՐԻ

— 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1902 —

ԹԻՒ 41

## ԲՈՎԱՆԴԱՆԻԹԻՒՆ

Կրիկեան յուսեմք. Նուիրական սօսին. ՅՍՍ.ԿԱՆ ՎԱՐԳ. — Չամբարոյք. ՓԱՅԼԱԿ. — Օսար  
Յեմ. Կրքի մարդը. ԳՍԱԹԻՒԼ ՄԻՆՏԻՍ. Թարգմ. ՕՐ. Մ. : — ՄԻ' . . . (Սիրերգ) Մ. ՈՒՂՈՒՐ.  
ԵՍԿ. — Գաւառային գրականութիւն. Յաղկոց. ԳԵՂԱՄ. — Հաստանկեան համոյէս : —  
Երեմ տարի Արժանքի մէջ (Թերթոն) : — Իզմիրի ոգիք :

## ԿԻԼԻԿԵԱՆ ՅՈՒԹՔԵՐ

### ՆՈՒՐԱԿԱՆ ՍՕՍԻՆ

Ասոյ դէպ ի արեւելահայկա երկարող  
անաշարքերուն մէջ՝ էն բարձր ու ըրգածեւ  
անցող լեռն է ձէպէլը Նուրի<sup>(1)</sup> որ Մարաշի  
ու մերձակայ լեռան մը սահմանագիծին վրայ  
լուսնամաճ՝ հպարտօրէն իր փռուտ կողերը ցոյց  
աւտայ անցորդին, ու կարծես փորձելու ճիգ  
էն ալ կընէ իր լերկ ու մերկ գլուխն աւելի  
թր ցցել քան ճիւղապատ սառ սարերը Տաւ-  
րոսին :

Ձէպէլի Նուր՝ արդարեւ բարձր է բաղ-  
ամամբ իր շուրջը գտնուած լեռներուն ու-  
րանք թղուկ դաճաճներ կերեւան անոր քով,  
այս չիրար հաւասարիլ Տաւրոսի բարձրու-  
թեան :

Ելլիսամանի գեղադուարի ձովիտներէն բըզ-  
աղ Զիհան գետը՝ երբ կը հասնի Ախրը լե-  
ռանց մանուածապատ կիրճերէն ձէպէլը  
Նուրի ստորոտը, կարծես անցք մը խնդրելու  
բուն ճիգերով աղաչանքի սուր ճիչեր կ'ար-  
եւելէ, ու ապա խոնարհելով անզընդախոր  
գորեւանդներն ի վար՝ համբոյրներ կուտայ  
անոր ոտուղներուն, ու կանցնի իկրթայ օղակ  
աղակ դէպ ի դաշտօրայքը Մամեսարայ եւ ան-  
հոյ կը թափի Միջերկրականի ծոցը :

Հոս՝ այս գետին անցքին եւ ձէպէլը Նուրի  
ստորոտը, գիւղակի մը ցանցառ տընվի-  
տիքը<sup>(2)</sup> կերեւան, ուր երբեմն կար ու կ'ապ-  
ւէր նուիրական սօսի մըն ալ : Այս ծառին  
բարձրութիւնը երկնուղէշ, տարածութիւնը  
լայնանիստ, անպատճառ ճամբորդներու ու-  
շաղրութիւնը պիտի գրաւէր : Հաստաբուն էր  
ան ու հաստապուն, թիկնեղ ու կաշնբուն  
բազուկներ ունէր, հազար ու մէկ ճիւղերով  
հաստապիւրկ կողեր ու իր ընդհանուր աեւքն  
ալ ահագին վրանի մը ձեւն ունէր :

Այդ սօսին՝ հակառակ գետափին մօտ բու-  
սած ըլլալուն, որ ամէն գարնան եւ աշնան  
կատաղի յորդուններ կուեննար, պեղելով ու  
բլքտելով անոր արմատներուն մէկ երկրորդ  
մասը, միշտ կանգուն կը մնար առանց ցըն-  
ցում մ'իսկ կրելու : Թէեւ երկնքի կայծն  
ու կայծակներ անոր կողերուն վրայ լայն  
լայն ճեքեր բացած էին, թէեւ ձէ-  
պէլը Նուրի սառ բարձունքէն փչող ձմրան  
ցրաին պախրցիներն<sup>(3)</sup> ալ շարունակ կը  
ցնցէին զինքը, ան սակայն դեռ կեցած էր  
կանգուն, կուրծք տալով փամանակին եւ

(2) Կրիկեան գաւառաբարբառով՝ տուներ :

(3) Կրիկեան գաւառաբարբառով՝ ցուրտ հովեր :

(1) Լուսոյ լեռ :

եղանակներուն աղբեցութեանց ու աւերում-ներուն :

Ու ամէն գարնան դարձեալ աս ծառը կը հագնէր իր երիտասարդութեան կանանչ վերարկուն՝ հակառակ իր տարիքին , որ հոս-կու , ջղակազմ ծերունի նահապետներուն նմանութիւնը կը բերէր : Քսան տարի առաջ կը յիշեմ աս նուիրական սօսին , որուն շուքին տակ գիշեր մըն ալ հանգչելու բաղդը ունեցած եմ :

Ոչ թէ ժամանակը միայն անզօր գտնուած էր զինքը զգեստնելու , այլ գիւղացիք ալ երկիւղած ու պատկառուն զգացումով մը խնայած էին իրեն . ոչ մէկը իր կացինը փորձել յանդգնած էր անոր կողերուն , աւանդելով սերունդէ սերունդ թէ՛ այդ ծառը նուիրական է , թէ անոր մէջ ոգիներ կը բնակին , թէ ով որ անոր կացին մը դարնէ՝ օճալնը կը մարի , վերջապէս շատ մը առաստղալա-նութիւններ հիւստած էին անոր նկատմամբ :

Կրօնական երկիւղածութիւն մըն ալ ունէին անդացի շինականք այդ սօսիի մասին . վասն զի գիւղին ծերուկ Տէր Պապան պատմած էր թէ՛ Թադէոս Առաքեալ անոր հովանիին տակն էր նստեր Եդեսիա քարոզելու գացած ատենը :

Շատ աշուղներ ներշնչուած անոր պատկառելի երեւոյթէն , գեղծներ կրգած էին :

Աս ծառին կողերուն ու փեռեկուած կուրծքին վրայ՝ կ'երեւային թուանշաններ , ամիսներու ու տարիներու , եւ անուններու սկզբնա-տառեր , զորս հետաքրքիր անցորդներ փորեր փորաղբեր էին անոր դիրք-մագաղաթ կողքին վրայ , անմոռաց պահել ուզելով իրենց անցքի յիշատակն ու յուշերը . անոր սաղարթախիտ ստերուն վրայ շինուած էին նաեւ հազարաւոր բոյներ գաղթական թռչուն-ներու : Իսկ ամառուան ապակերուն իր զով ու հով շուքին տակ , կուղար հօտաղն իր հօտը մակաղել , գեղջուկ հովիւն ու հովուուհին իրենց ուլիկներն ու գառնուկները քնա-ցընել , Գեղացի գեղանի աղջնակներն ալ՝ կախօրրաններ շինելով՝ կ'օրօրուէին անոր ճիւղերէն , աւաչներ աչելով , ու դիտելով միանգամայն իրենց նազելի ճօճանքն ու մարդ-հրեշտակ պաակերները Զիհանի վճիռ ալեակ-ներուն մէջ :

Նուիրական այս սօսին՝ պաշտելութեան առարկայ էր դարձեր մասնաւորապէս ծեր մամիկներու , որոնք կուգային իրենց հիւանդ-ներուն համար աղօթքներ մօմնջել , կապելով անոր ճիւղերուն գոյնզգոյն դերձաններ ու լաթի կտորիկներ :

Ե՛հ , ինչո՞ւ մեղադրել գիւղացին , որ իր սրտին մէջ դէպի հսկայ ծառը , դէպի մամ-ռապատ խաչքարը , դէպի հողը , դէպի ջուրը բան մը կը պահէ , միթէ նախապատմական վիճակն ալ աս չէ՞ր մարդուն :

Ո՛վ ըսաւ թէ մարդուն սիրտը չէ կապ-ուած անխօս նիւթին ու իրին հետ , ինչ ձեւ-երով եւ ինչ արտայայտութիւններով ալ եղած ըլլայ ան :

Մարդկային սիրտն ու սէրը , զգացումներն ու յոյզերը՝ անտես բան մը չեն դներ անոնց մէջ , ու շատ անգամ մարդ զգացումներով հոգի չի՞ տար անհոգի իրերու , չունչ՝ ան-չունչ ու անխօս առարկաներու :

\* \* \*

Ան տարին ձմեռը բուռն էր ու սաստիկ , այնպէս որ , դար ու դաշտ , սարն ու ձորեր ծածկուեր էին ձրւնով : Տիրող ցուրախ սաստկութենէն , երկնքի թռչունները երա-մովին ու կաքաւներն ալ ջուկ ջուկ գիւղին վրայ կը թափէին , իրենց համար անդ ու դա-դար չգտնելով :

Օգերը նոյնը չմտացին սակայն , ոչ ալ ձմրան խստութիւնները . վաղուց դադ-րած էին փքաշունչ քամիները ու ցրա-ղին պախրցին ալ շէպէլը Նուրի : Թխալտ ամպերը ցրուած էին վերէն ու կերեւար ծի-ղուն ջրնջ կապոյտը երկինքին : Գիւղա-ցիք ուրախ դուարթ սկսեր էին կամօց կա-մօց դուրս գալ իրենց ձիւնածածկ երդիքնե-րու տակէն . բայց յետոյ որքան դժբաղդ զգացեր էին ինքզինքրին՝ տեսնելով նուիրա-կան սօսիին դիտապաստ գետին խնայը , դր ձիւնը նախորդ օրերուն՝ պատանքած էր ու անոր վիթխարի մարմինը հսկայ մեռելի մը ցուրտ ու արտօր սպաւառութիւնը կը թողար միամիտ գիւղացիներուն վրայ , մանաւանդ կընտէքը<sup>(1)</sup> լայու չափ յուզուած էին սուրբ

(1) Կիները :

խափն կործանումը տեսնելով : Կարծես թէ իրենց սրտին խորքը ու հոգիներուն մէջ բանի լին ալ կործանումը զգացած էին որ իրենց ամբողջ կեանքը կապած կապկապած էր այդ հիւսուսեց նուիրական ծառին հետ , որուն ջրովին էին մեծցեր ու մեծցուցեր իրենց պը-ըզտէքը<sup>(1)</sup> :

Ան գիտէր ոչ միայն անոնց պապը , այլ իր ճանչնար պապուն էլ պապը , հաւուն էլ հաւը :

Չինհալէն յետոյ սակայն , գիւղացիք նա՞ ուրախութիւն զգացեր էին տեսնելով ջրին անաշխին օրերուն ինկած նուիրական օտարին լայնատարած արմատներէն նոր ու զեղաբոլոր զոյգ մը սօսիներու վերընծիւղելը : Ամբողջ քսան տարի է այն թուականէն ի վեր , որ ես տեսած էի նուիրական սօսին , ուր Ջիւան գետը իր գոռ ու սրոտ ալիքներով լողալար խոնարհիլ ու համբուրել ոտունները մէջէլը Նուրիի , եւ ուր այժմ նորածիլ սօսի-ներ մին քան գմբուսի գեղեցիկ՝ քսան դա-րաններ բոլորած , կերեւան ճիւղան հասակով զբաղեց թէ երկուորեակ թռռիկները եղած ըլ-լային այն նուիրական դարաւոր սօսիին որ իր անմեա արմատներէն կեանք էր աուեր անոնց :

ՍՍԱԿԱՆ ՎԱՐԴ .

Գալֆաեան Որբանոցի Խնամակալներուն առաջարկութեամբ եւ Պատրիարքական հաս-տատութեամբ՝ Տիկնանց Խնամակալութիւն մը կազմուեցաւ , որ պիտի հսկէ այդ հաստա-տութեան ներքին բարեկարգութեան վրայ , պիտի զարգացնէ ձեռարուեստները , ստիու-ններու ապագային նկատմամբ անօրինու-թիւններ պիտի ընէ եւ ընտանեկան շրջանակ-ներու մէջ նպաստ պիտի հաւաքէ : Անդամու-ններն են , Տիկնայք՝ Աննա Գ. Էստեան , Աղանի Գաղաղեան , Բրաւ Աղասեան , Էլիզա-Յէր-Յարութիւնեան , Երանուհի Նէվրուդ , Երանուհի Փափաղեան , Սյուսի Կ. Գարակէօզ-եան եւ Սօֆի Գափամաճեան :

— Գալֆաեան Որբանոցին ի նպաստ զրա-նակալն նպատակները կը շարունակուին բարե-նէր անձերու կողմէ : Գրիգոր էֆ. Կիւմիւշ-էթեան — Մանթաշոֆ տան Թուրքիոյ ներկա-նացուցիչը — յանձն առեր է Որբանոցին գոր-ծածութեան յատուկ տարեկան քարիւղի հայ-թայթումը , նուիրելով միանգամայն 10 սակի :

(1) Պզտիկները :

## Օ Տ Ա Ր Է Ջ Ե Ր

Փաթիւլ Մենեստ, Ֆրանսացի նրբամիտ հե-ղինակը , այս օրերս հրատարակեց գրական հասոյ մը , *Բարիզեան հրեշներ* (Monstres pa-riens) որուն ե՛ն գեղեցիկ գլուխներէն մեկը քարգմանելով խմբագրութեան ղեկած Է գրաւեր օրիորդ մը , սա ձօնով .

«Մեր շա՛ս փոքրաթիւ élite գրագետներուն կը նուիրեմ այս հասուածք» :

## Գ Ր Չ Ի Մ Ա Ր Դ Ը

Երէկ գիշեր , գրական աշխարհին դեռ ան-ծանօթ երիտասարդ բանաստեղծ մը իր առա-ջին գրքին վերջին փորձերը կը սրբագրէր . նոյն սրահուն հոն գտնուող հնամեայ գրագէտ մը բռնէ շարժումով մը յանկարծ անոր թեւը կը բռնէ եւ խոստ ձայնով մը կ'ըսէ անոր .

— Մի՛ հրատարակէք այդ ոտանաւորները !

— Ինչո՞ւ համար , արդեօք յոռի՞ կը զրա-նէք զանոնք :

— Չը կարգացի , չեմ ուզեր կարգալ , թերեւս սքանչելի են . բայց զգուշացէք զա-նոնք հրատարակելէ :

— Բայց ինչո՞ւ համար ուրեմն :

— Անոր համար որ երբ անգամ մը հրա-պարակ ելլէ այդ գիրքը , ա՛յ այնուհետեւ անդարմանելիօրէն զրագէտ էք , բրուեստա-դէտ էք , այսինքն հրէշ էք :

— Հրէ՛շ :

— Այո՛ , հրէշ :

— Ուրեմն դուք հրէ՛շ էք , սիրելի վար-պետ :

— Հարկա՛ւ . եւ ամէնէն զարհուրելիե-րէն մէկը , քանի որ ուրիշներէ տեւի երկար առնէ ի վեր ոտանաւոր , զէպ եւ ողբերգու-թիւն կը յօրինեմ :

Երիտասարդը խոշոր խոշոր կը բանար աչքերը : Միւսը շարունակեց սենեակին մէջ վեր վար քալելով եւ բռնէ շարժումներով .

— Ի՞րա՛ւ պարկեշտ մարդեր ենք մենք , անտարակոյս , եւ ուղղամիտ , վեհանձն ! քսան երեսուն տարի տառջ , երիտասարդ

գրադէտներուն համար նորաձեւութիւն էր հարիւր սու փոխ առնել եւ մոռնալ զայն վճարելու . նորաձեւութիւն էր բնական փոխել առանց տանուաիրօջը խմացնելու . նորաձեւութիւն էր երբեք չը վճարել , ո՛չ իսկ երազի մէջ , ո՛չ կօշկակարին , ո՛չ դերձակին : Պարտքը ահաակ մը պարտականութիւն էր : Երկրասարգական յիմարութիւններ : Այդ սեւրունդը անհետացաւ . գրականութիւնը կարգի եկաւ . երկար ձգուած մազերնիս կտրեցինք եւ մեր գործերուն մէջ կարգ ու սարք ներմուծեցինք . այլ եւս կարմիր բաճկոն չենք հագնիր , եւ մեր դռնապանը կը բարեւէ մեզ , որովհետեւ մենք ալ ճիշտ գետնայարկի գրամատէրին պէս կամ երկրորդ յարկի նստարին պէս նուէրներ կը բաշխենք : Բարի քաղաքացիներ , ընտիր ամուսիններ , բարի հայեր , մենք մեզի համար կը սպասաստենք պատուական տապանապիւններ : Ես որ կը խօսիմ ձեզի հետ այս պահուս , վերջին պատերազմին մէջ , Անուի Ռէնօի հետ քով քովի հրացան արձակած եմ : Կին մը ունիմ որուն երբեք ամենափոքր վիշտ մը չեմ պատճառած , եւ ես ինքս պատմութեան եւ աշխարհագրութեան դաս կու տամ իմ երեք զաւակներուն որոնց կը սորվեցնեմ գրականութենէ խորշիւ : Աւելին ըսեմ ձեզի , եղաւ որ — նշանաւոր փոփոխում աշխարհիս իրերուն , — եղաւ որ ես ինքս վեց հազար ֆրանք փոխ առի , ո՛չ առանց խիստ յանդիմանութիւն մը ուղղելու , հօրեղբայրներէս մէկուն՝ որ Անկուլէմի մէջ մանր երկաթեղէնի վաճառական է , եւ որ մեծ վնաս կրիւր էր գործին մէջ , շրջուն դերասանութիւն մը ազուր աշքերուն պատճառաւ : Վերջապէս , կանոնաւոր , ողջամիտ , անբասիր , պատուական մարդեր ենք մենք այսօր : Բայց ե՛ս կ'ըսեմ ձեզի որ մենք հրէշներ ենք !

\* \* \*

«Վառնգի , միթէ հրէշապիւն չէ՞ մարդ ըլլալով , չըլլալ , չը կարենալ ըլլալ ամէնո՛ւն պէս մարդ մը . չը կարենալ ո՛չ սիրել , ո՛չ առնել , ո՛չ վայելել , ո՛չ տառապիլ այնպէս ինչպէս ուրիշները կը սիրեն կամ կ'առնեն , կը վայելեն կամ կը տառապին : Եւ մենք՝ գրագէտներս՝ չենք կրնար , չէ՛ , չենք կրնար , ո՛չ

մէկ պարագայի մէջ , ամէնուն պէս ըլլալ : Այնքա՛ն երազեցինք կամ զննեցինք ու խորհրդածեցինք , այնքան իմաստասիրեցինք , վերլուծեցինք , մեր եւ ուրիշներուն վրայ , ամէն զգացում եւ ամէն կիրք , այնքան հետազօտեցինք անոնց ծագումը , այնքան հետեւեցանք անոնց զարգացումին եւ ապա անկումին , այնքան արձանագրեցինք մեր յիշողութեան մէջ անոնց առաջ բերած ձեւերը եւ թելադրած բարբառը , որ խաղաղ սպաննեցինք մենք մեր մէջ միմիմիս եւ բնական յուզումներու զօրութիւնը եւ պարզաբար՝ երջանիկ կամ դժբաղդ ըլլալու կարողութիւնը : Կորսնցուցինք հողիին բոլոր սուրբ անդիմապիտանութիւնները . անհնարին դարձաւ մեզի՝ երբ զգածուած ենք , լոկ զգած ուկալ չատանալ , կը ստուգենք , կը գնահատենք մեր յոյսերը , մեր մարմնները , մեր սրտաբեկումները , մեր խայտանքն ու տուայտանքը , կ'արձանագրենք զմեզ լափող նախանձաբեկ անձկութիւնները երբ ժամադրաւայրը չը գար ան որուն կը սպասենք : Մեր գարշելի քննական ոգին կը դատէ համբոյրներն ու դգուանքը , կը բաղդատէ զանոնք , կը հաւանի կամ կը դատապարտէ , վերապահումներ կ'ընէ , ծաշակի վրիպակներ ի վեր կը հանենք մեր խնդրութեանց եւ յուսահատութեանց յորդումին մէջ . քերականութիւնը սիրոյ հետ կը խառնենք , եւ , միեւնոյն ատեն ստորագրական անկատարին եւ գերագոյն արբւաութեան ձաւակ՝ կը դռնենք մեր ահաբեկ բարեկամութիւնը : «Օ՛հ ! կը բաղձայի որ սիրէիր զիս մինչ ցոյժս !» (Je voudrais que tu m'aimasses jusqu'à la mort !)

Գրականութիւն , գրականութիւն , դուն այլ եւս մեր սիրաբեկը , մեր զգալութիւնը եղար , մեր միտք , մեր ձայնը եղար դուն . ա՛յլ կեանքը չէ՛ որ կ'ապրինք մենք , այլ քերթուած մը , կամ վէպ մը , կամ ողբերգութիւն մը : Ա՛հ , որքա՛ն մտադիւր ես կուտայի բոլոր այն ահաակ մը փառքը զոր կրնամ ձեռք բերած ըլլալ երսուն տարուան երկասիրութեամբ , վայրկեան մը , սոսկ վայրկեան մը , կարենալ թափելու համար տաք տաք արցունքներ առանց նշմարելութէ՝ կ'արտասուեմ :

\* \* \*

«Պարահանդէսի մը մէջ էր որ տեսայ առօրին անգամ ան որ կիներ է հիմակ : Ինչքան գեղեցիկ էր , իր թուրս աչքերովը եւ լիակապոյն գանգրապեղ քնքուշ վարսերովը : Ո՛հ , անշուշտ սրտովս յարեցայ անոր . բայց , միեւնոյն ատեն , կը խորհէի այն ներսողական տաղին զոր հարկ պիտի ըլլար ինծի յօրինել՝ երգելու համար փառքը անոր չնաշխարհիկ գեղեցկութեան . եւ ահա՛ Ռօնուառի մէկ տառնաւորը մտքիս մէջ սկսաւ նշագրուիլ :

«Մօտեցայ ապագայ կնոջս , սրտաթուռնոր լուրմով , անտարակոյս , բայց նաեւ յուզուիլ ջանալով , վասնզի ստուգիւ «գրագրութեան» պիտի չըլլար յուզուած չըլլալ : Եւ այն ատեն , նոյն այն տեսարանը տեղի ունեցաւ ուր Ռօմէ'օ կը հանդիպի Ժիւլիէթի : Մինչեւ իսկ յեղակարծ ներշնչում մըն ալ ունեցայ . ներկայ աշխարհը փոխադրուած , այժմեան հանդերձանքով , նոյն տեսարանը թափարակմին վրայ , մեծ տպաւորութիւն տալով պիտի . բերէր : Կատակերգութեանցս մէկուն մէջ ներագրեցի զայն :

«Հասաւ հարսնիքին օրը : անպատուս երանութեան անճառելի այդ օրը , որուն թուականին անձայն վերյուշումը ամէնէն թախծալէ ձերուներին չրթունքներուն վրայ թարմ պիտի մը կը փթթեցնէ : Իմս պիտի ըլլար վերապէս ան որուն այնքան անձկոտ , խելաւիճցանկութեամբ սպասած էի , — կատարեալ արամեղական տարփանք մը : — Առաջատի սենեակը մտնել , զրախոր մտնել է : Ո՛հ ! սիրանուշ բոյնը սրբամաքուր ! հոն էր ան , զիւթական անկողնին վրայ , թափանչիկ խորհուրդը սպիտակ եւ վարդագոյն վառարաններուն , ինչպէս մշուշ մը երկչոտ առթիւ թափուած ան եւ գգուանքի . աւա՛ղ , նկատեցաւ համար սենեակը , պէտք էր թէօթիլ Գօթիէ մը ըլլալ : Այսու հանդերձ միտքս թիլ փորձել , Կար մանաւանդ կանթեղի մը վրայ , մուլինէ եւ մետաքսէ խորշի մը մէջ զարկուած , կիսաստուեր մը , զոր շատ զարմալի պիտի ըլլար նկարագրել : Գրկեալս մէջ ունէի կիներ ! սիրտս կը բաբախէր յոյժքս խորտակելու աստիճան . — հասաւ իմ բացատրութիւն մըն է առ , բայց , վերապէս , ինչ որ ալ ըսեն , ուղիղ է եւ եր-

բեմն գործածուելուն մէջ մշտաւ մը չը կայ . — հեշտալիօրէն եղի ըմպելիի պէս բան մը , վերին յափշտակութիւն մը կը զգայի հոսիլ երաններուն մէջ , ու երբ սպիտակ սնդուար յուշիկ վար սահեցաւ , ինկաւ , այն ատեն , զրեթէ զահանգած երանութեանս մեծութեանէն , երկու ձեռքս իրար կցեցի հիասքանչ , իրեւ հոգեխնդիր սուրբ կոյսի մը առջեւ , աստուածավառ երկիւղածութեամբ առկուած մարդու մը , եւ քանի մը քայլ ետ ընկրկեցայ , ինչպէս կը հեռանանք հրաշակերտ ներկարի մը առջեւէն՝ անոր տպաւորութիւնը աւելի լաւ դատելու համար : Ահ ! անպիտան , ստահա՛կ , գրագէտ : Ափրիկէի խորերը ապրող վայրենի մը , իմ տեղս ինձմէ աւելի երջանիկ պիտի ըլլար : Ես ինձմէ կը խպնէի եւ փափաք կը զգայի ինքզինքս ապաստելու : Ապա ուրեմն , մի' խորհիր , մի' աշխատիր , թշուառակա՛ն , անմիտ , անմար եղիր , սիրահար եղիր : Ահ , այո՛ , ձիշտ այդ գիշերը ահա , կը գտնէի հինգերորդ արարուածը այն ողբերգութեանս որ զուր-գործոցս է , կըսեն : Կը յիշէ՞ք նորաստակ ամուսնեւուն խօսակցութիւնը :

«Ու այսպէս , կեանքիս ամէն պարագաներուն մէջ , միշտ գրականութիւնը հաւածեց , յաղթահարեց , զրաւեց , ինքնասուզեց բուսական էութիւնս : Երբ հայրս մեռաւ , անհուն թախծութեամբ համակուած՝ երկիւղ ու նէի միշտ թէ գուցէ այնքան դառն չըլլար լիշտս , չըլլար այնպէս ինչպէս պէտք էր որ ըլլար աղէկ երկասիրուած գրքի մը մէջ : Արտասուալից աչքերով վշտակիր այցելուներու ձեռքը սեղմած ատենս , կը հարցնէի ինքնիւրենս թէ արդեօք կերպարանքս եւ շարժուկացքս վայելչապէս կ'արտայայտէին յուսահատութեանս անկեղծ սաստկութիւնը , եւ միտքս կու գար հետեւեալ խօսքերը բարեկամի մը , գրագէտ ինքն ալ , դժբաղդաբար . «Երբ մեծ աղէտ մը կը հասնի մեզի , պէտք է ճարտար կատակերգակ դերասանի մը՝ դիմենք որպէսզի՝ դիմանաք պարտաւատչա՞ծ դիրքը զոր պէտք է անենք այդ օրինակ պարագայի մէջ : Այսպէս ուրեմն , ո՛չ տարփաւոր , ո՛չ ամուսին , ո՛չ որդի , լոկ արուեստագէտ , միշտ արուեստագէտ : Եւ ահա թէ

ինչո՞ւ կ'ատենմ' քնականին սպաննիչ տրուեաաը , Ահա թէ ինչո՞ւ կը թախանձեմ , ով երիտա- սարդ , որ չհրատարակես այդ գիրքդ , որ չառնես առաջին քայլը աղետալի դառնալային վրայ որուն վերելքը այլ եւս անհնար է : Որմնաղի՛ր եղիր , սակարանի մարդ եղիր , թափանցիկ խաղաքարտերու վաճառող եղիր , վարսայարդար եղիր , դրամատէր , նոտար , գազանացոյց , նուազածու , սրճարանի եր- գի՛չ եղիր , ինչ կուզես եղիր , բայց դրագէտ մի՛ ըլլար , եթէ կուզես լալ իրապէս , խըն- դալ իրապէս , լիուլի , սիրե՛լ երբ կը սի- րես , տառապի՛լ երբ կը տառապիս , ապրի՛լ վերջապէս : »

ԳԱԹԻՒՆՆԱԿԱՆ ՄԷՆՏԵՍ

Թարգմ. ՕՐ. Մ.



Մենացումի այն պահերէն մին եր ուր  
Կը քանդակուիմ կամ կը ցընդիմ խոստումներ,  
Թերահաւաս , սիրսս անարեւ ու քափուր՝  
Նըսած էի իր ոսկին քակ . առսու մ'եր :

Ու մեղանոյց երգի ծրեւն մը կու գար  
Արձագանգել սիրոյ զարթոնքն հոգւոյս մեջ .  
Կը մընչեւ ան , մինչ իմ շուրթերս ապիկար՝  
Կը շարժէիմ փըսփըստւոյ մը անկերջ . . . :

Վայրի հիշով մը — քե ինչո՛ւ , չեմ գիտեր —  
Յանկարճ քեփուն , խօլ մասնետուլս ուզեցի  
Շոյել նակսին շիկնոս վարդերն ու քերթեր ,  
Երբ՝ միավանկ «մի՛» սասն ուղղեց ան ինձի :

Քի՛չ մընաց որ հեռանայի դառնացած՝  
Այդ մերժումի շարժումէն... օհ, կեղծ եր«մի՛»ն...  
«Մի՛»ն՝ խաբուսիկ յանախ ու մի՛շտ սիրա-  
ւոր... :

Պըչրոս կոչ մը՝ զոր զոց գիտէ ամեն կիմ . . . :

Մ. ՌԵՂՈՒՐԵԱՆ

## ԾԱՂԿՈՑ

(ԳԱՒԱՌԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ)

Վառէի պոծառ արեւը տարածամ խանդը-  
րած էր : Դեռ ճահիլ-ճնուլ՝ նա այրիացած ու  
մինակ կ'ապրէր իր մէկիկ աղջկայ հետ : Այրի  
կին , բայց սերսուր , անարար եւ աչք-բաց  
էր : Աւելի լաւ է ըսել անոր տոնակին՝ քան  
այրի մը : Իր զօրաւոր լեզուանիւթիւնն ալ  
նուազ կ'ամ արհամարհելի նեցուկ մը չէր :  
Իրեւ ժրաջան , անասող եւ եփող-թափող՝  
գեղին մէջ իրեն հասնող չկար : Տունը՝ ուր  
կը սթըլուրէր՝ թէեւ պոճախ խրճիկ մը ,  
փոքրիկ բաց-բակով մը շրջանակուած , սա-  
կայն՝ ա՛յնքան սպրկիկ ու սիրուն , ծեփուկ-  
օծնուկ , որ հոն ոտք դնողը՝ խելոյն կը զգար  
թէ՝ մաքրութեան ոգի մը կը հսկէ : Այս կին-  
արմատը հնարիմաց կամքի մ'էլ աէր էր :  
Ինքն էր տան ապիսակ-աօրոյ՛ր՝ երբ որ ողջ  
էր էրին՝ Յարէն , որ շատ ապրի առաջ մեռ-  
նելով կնոջ եւ մէկ հատիկ աղջկան Գոհարին  
ժառանգութիւն թողած էր՝ չորս արա՛ եր-  
կուքը ջրարբի , մէկ խոտ-հունձ , մէկ բան-  
ճարանոց , կալ , մարագ ու ծանօթ անակը ,  
որ չորս բաժանումներ ունէր՝ սրահ , ցանոց ,  
թոնրատուն եւ ախոռ բարակ փողանով մը :  
Ունէր նաեւ 2 մատակ , 2 կով , 4 եղ՝ ձա-  
գեր , հորթեր , եւայլն :

Իրա՛ւ , Յարօն դառ դատաւ , զրկուկ եւ-  
լաւ , բայց կ'սհամբայի մը հարստութիւնը  
չահեցաւ , զոր Վառէն խելացութեամբ շա-  
հադործեց եւ վայելեց ընտիր մատակարարու-  
թեամբ ու անտեսութեամբ : Ամուսինն վա-  
ղահաս մահը իսկի չչփոթեցուց էտ պոքր  
կինը , չարունակեց իր դատումները աւելի  
կորովով . եղանց լուծքը կեսրար մշակու-  
թեան սուաւ գօտով կարիճ հողագործի մը ,  
որ վարելով՝ վաստակելով արդիւնքը կը կի-  
սէր իր հետ . իսկ անական ներսի , — զրոյ՛ բո-  
լոր աշխատութիւններն էլ ինքը կը կատա-  
րէր , անոնց հետ մշակելով նաեւ պզտիկ  
բանճարանոցը , որուն ոռոգման ջուրը կ'օհն-  
րով կը փոխադրէր առուակէն : Մեղունոցի

մը կը նմանէր այրիին խրճիթը , ուր ամէն պտուղ կը գտնուէր , նոյն իսկ դեղ ու դուր , զոր կը հայթայթէր , կը հասցնէր հիւանդ զեղջուկներուն : Է՛լ մինակ չէր համարուեր , հասած էր մէկիկ աղջիկը՝ Գոհար՝ գիշեր ու ցորեկի զիւրաշարժ աշխոյժ թեւընկերը , զոր թեւ ա՛նուշ—չանուշով պահեր , բայց չարաքաջ մեծցնելով եփեր էր զայն առտնին ծառայութեանց եւ աշխատութեանց մէջ : Ձեռագործի եւ ասղնկարի կողմէ իրեն հաւասարող չկար բոլոր աղջիկներուն մէջ : Անոր հալաւը մէկ աւուր ձիւնի նման սպիտակ ու փոփուր էր , հապա՛ պահունի շորեքը , արծթէ գագաթը , թփուկ վզնոցը՝, սակի շարանը , փակեքը , որոնց նման շատ քիչեր ունէին . երբ որ հագուորէր , ամէնէն զզզուին էր . . . :

Վառէն՝ այս՛ , շատ խելացիկէկ էր՝ եւ իր կարճ խելքով՝ գեղացնակ պիւտծէ մը ստեղծեր ու կը հետեւէր անոր ուղիղ անտեսութեամբ : Այնպէս որ , տարուէ տարի իր շինական ծախքերը , աղջկան արդուզարդի պահանքները հոգալէ զատ՝ 3—400 զրուշ ալ կ'աւելցնէր ու կը ծրարէր կաւէ անտուկին՝ բոլորին մէջ : Նա այժմ ունէր 2—3000 զուրաչի պատրաստ գումար մը , ինչ որ հաշուապետ բան է գեղական անարծաթ համայնքին համար :

Բաց ի տօնի եւ ուխտի օրերէն՝ լուր֊օրերն էլ հագուկ—սգուկ կը պահէր աղջիկը , զիտէր որ հալաւն ալ իր օգտակար դերը կ'ունենայ՝ աղջիկը փափագելի հարսնութեան մը առաջնորդելու համար : Միշտ կ'ըսէր Գոհարին «սերսուր հագուկեր — էչն ի փալան , մարդն ի հալաւ» : Հարկաւ Վառէն պիտի ունենար կնիկ դասէն իր նախանձորդները , որոնք առիթ չէին փախցնէր զայն ճոշալու , բեգովելու (անուանարկիկ) : Զօջքերուն՝ սու֊փորաբար հեգնութեամբ կը պատասխանէր : Անդուսդ փափագ մը ունէր՝ աղջիկը կարգել ընտիր անփեսայի մը հետ : Քանիները ընտրեց , բայց ճոշալով փախուցին՝ Գոհարը փա֊փկ է , ըսելով : Փառիկ կը՝ նշանակէ չեղողք՝ զուրան ներսանով : Ձօջիկները նախապաշարուած են փառիկներու համար , անոնց լաւ բարոյական մը չեն գուշակեր : Այրին

չէր յուսահատեր , ողջ մնան վիճկաւարներ (բաղլադուշակ) Վառէի միտքը լեցուցեր էին — Գոհարը իր փափագին պըտ հասնի . . . ըսեր էին :

\* \* \*

Անդրոյի խնայի տունը , որ գեղին էն համբայ դասը կը կազմէր , Վառէի խրճիթին հետ պատ պատի դրացի էր : Համբայ տուն մըն էր արգարեւ , մալուլ—միւլքով , տաւար ոչխարով , ու անցիի դատկաններով : Նախիր մըն էին էտ տան խորդեր , ազապ աղջիկներ , հոտաղներ , օրոցկաններ , ու միջավար կամ նոր—հարս կնիկներ : Անոնց տան դրուացքը թաղ մը գետին կը բռնէր : Շինական էս տեսակ բաղմամբս ընտանիքներու մէջ , շատ քիչ հեղ կը տիրէ խնամեալ ու համեարաշխ մատակարարութիւն : Ամէնէն առաջ կիները՝ որոնք դժուար կը հասկնան իրարու լեզուէ՝ անհամաձայնութեան քարը կը գլորեն , որուն կը հետեւին ապուշ էրեկներն ալ , եւ անա օրէցօր կըսկսի քակուիլ նահապետական միութիւնը , մանաւանդ երբ որ տան նահապետը անհոգ , անճարակ մէկը ըլլայ : Անհաշիւ մատակարարութիւնը , տան հասոյթնեւրուն ընտանեաց իւրաքանչիւր անդամներուն ձեռք ծածուումը կը փութացնեն չքաւորութիւնն օճախ տան թոնիրին բոլորափք , ուր՝ գիշեր ցորեկ՝ գուգուրած կը կերակրուէին տանեակ մը աղքատներ : Էս հալի մէջ էր խնայենց տունը , որ սակայն դեռ կը պահէր օճախի անուն ու անկիւն : Մեծ տան ժառանգորդներն էին հինգ եղբայրներ , որոնց անդրանիկն էր խնայ՝ 50ը անցուկ համբայ , դեռ իր վրայ ունենալով տան ու գեղին սպիտակ—մօրուքութիւնը : Չնայելով որ իր եղբայրները թոռներու տէր էին , խնայի արուզաւակները դեռ փոքր էին : Ամէնէն մեծն էր Միւլքոնը , հազիւ 14 տարեկան , բայց գօտով կարիճ ու խորտակ աղայ մը : Գեղացիք այս տեսակ պարագաներու ներքեւ շատ փութկոտ կ'ըլլան իրենց սիրելիներու պսակը տեսնելու : Չօս կողմէն կը ստիպէին խնայ՝ Միւլքոնը կարգէ , էլ ինչի՞ կ'աչքես , տես խոզանը՝ (սպիտակ մազեր) ափսոսեր ին ունշ ու գունչըդ , 14 տարեկանը՝ էլ հասած կը հա-

մարուի, վասնզի կ'ըսեն որ 14 ամեայ պատանիին անթեատկը հաւելիթ կ'եմի. . . .

Ու սխալ չեն, 14 տարեկանէն բնութիւնը կը ծկտի ծաղկիլ ու ծլիլ, ջուլթակ սեռի մէջ միանգամայն: Անկէ վերջն է, որ շինական ծնողք կը սկսին զարդել ու զզզել արքունքի վազող զաւկները. կ'ուղարկեն յուստ հեռաւոր, մօտաւոր սրբավայրներուն, ուր ստէպ կը միանան զոյգ զոյգ տատրակները. . . . Է՛լ Մեղքոնը փեսայուի մը վիճակին մէջ զըրուած էր ծնողաց կողմէ. Մեղքոն՝ որու սիրուն պոյ-պուստթին հոգի կուտային ազապ աղջիկն ու մայրը:

Համբարձման հինգշաբթին՝ Սէրկիի սրբանական՝ ապառաժուած՝ այլ կռաթեւ սարի ետեւը գանուող եկեղեցիին ուխտը տեղի կ'ուներնայ՝ անոր չքեղ ու դիւթական անտառին մէջ, ուր խաչքարերու կարկառին քով կը ծլծլայ վճիտ աղբւրը, աղբւր որ սէր կը ժողվէ ու սէր կը բաշխէ, որ սարին սուրբ ծոցէն դեղ կը բերէ, հրաշք կը սփռէ, եւ սրտին ուզածը կուտայ սիրաթփռոշ պատանեկաց, աղջկան ու աղային, ու հոգեհմայ պաշար էնց մը աստուածավախ մեր ջոջիկներուն ըխաւոր:

Երկնառաք ուխտերուն հետ, կանանչ պըսակին էլ ուխտը տեղի կ'ունենայ աւելի խանդավառ հրճուանքով, սրտէ ի սիրտ գերբնական խնդութիւններ կը սուրբան թափանցիկ, եւ այդ խինդն ու հրճուանք կուգան կը հասնին չուր գեղական խրճիթները եւ գեղացիներու հոգիները: Համբարձման աղօթքանին ըխաւորք ճամբայ են՝ նախիր, նախիր, եւրամ, երամ, Սրտերը սերսուր, սրտերը սիրավառ ու հաւատաւոր են, ձգուած դէպ սարն դարեւոր ու ալեւոր, դէպ սրտուր արեւն մշտապայծառ, եւ երկնքէն գետինք հովանաւորով՝ ամենակալ, ամենախնամ Աստծուն գահոյքն ոսկեղէն ու հրեղէն, որու ներքեւ բարեխօս են իրենց ալէլուներով զբախտաբնակ ողիք սրբերուն եւ պաշտելի եկեղեցիին: Հասած են ի սարն եւ ի սուրբն: Ամէն զիտց հաւատքը կը փողփողի հոն՝ թէ վեր երկինք թէ վար գետինք: Հաւատք ըխաւորաց արտերուն մէջ, հրաշք վազեմի դամբարաններուն, հողու հաւսար խաչքարեւ

րուն, հող ու ջրին, ծառ ու ճղին վրայ: — Մատաղ եղինք, ծառայ մեռնինք քու դարկեանին կարմիր-կամար եկեղեցի. . . կը մըրմընջեն չորս կողմէ: Համարձր էն ամէն սրբաւթեանց, ու ճիշակ առ դերադոյն Աստուած: Ահա ջոջիկները՝ ռահվիրայք գեղջուկի ամբիժ, անայլայլ հաւատքին, բարի, բարի զգացումներուն, վառեր են, վառեր ձէթի պատրոյզը հողէ-ճրագին մէջ, լոյս-յարգանք նուիրելու, ու ծունդի չողած՝ կը կանչեն, կը կանչեն, կը զգածուին: Ջոջիկը զրախտի լոյս կը խնդրէ, իր մաշած կեանքին, աղջիկը՝ իր երազին իրականացումը, խորը՝ ոյժ-արեւ, հիւանդը՝ կաղզուրում, ու տիրացուն՝ ուշք ու փառ: Բայց տեսէ՛ք էս 6 էն 10 տարեկան երախտները պզտիկ խոժիկները՝ անգէտ բնութեան ու աստուորին, եկած են տոտլտալով, չսգած են հեւալով, մանրիկ, մատղաշ ձեռները կարկառուն՝ ջոջիկներէ բառեր մուրալով՝ կը մրմնջեն ու կը խնդրեն ինչ. . . . — Արեւ, արեւ մանկական, արեւ դարեանային, արեւ ծիլ ու ծաղկին, ճշմարտին ու վարդ մանուշիկին համբարձման:

Ա՛հ, ինչքան անարատ հաւատք, եւ ինչ աննմանակ զգացումներ հոգեկան: Անկարելի է որ այս հաւատքը իր փոխադարձ ներգործութիւնը չունենայ: Երկինքի գթութիւնը անհուն է, սուրբերուն բարեխօսութիւնը կարկառուն է, առատ կը հոսի, արագ կը հասնի, եւ ջերմուկ աղբւրքին զուլալ ջրին հետ կը գովանան ամէն սրտեր, ըխաւորին, ըլլայ մեծին, ըլլայ փոքրին: Ուխտը թամաւեցաւ, ըխաւորք իրենց տապկոց-կերակուրն էլ սարի կենսանորոգ օդով վայելելէ վերջ՝ բերկրալիր՝ սկսեցին ետ դառնալ: Պըդտիկներ յառաջ, ու տարիքոսներ ետեանց՝ չրջուեր էին դէպ դուրան դաշտը:

Մատղաշ ըխաւորներուն մէջ՝ ամէնէն աչքառուն է յառաջընթաց երկսեռ զոյգ մը, տղայ մ'ու աղջիկ մը, կամ Մեղքոնն ու Գոհարը: Երկուքն էլ 15 ական տարեկան, Մեղքոնը պօծառ է իր մեղրամամէ մարմնով, գեղեցիկ հասակով, եղեւնի թուխ-թուխ աչքերով, իսկ Գոհարը ոչ այնչափ գեղանի, որչափ իր ապրուշում ու փալիւն հալանեւ

ըր, փեռատութիւնն է գլխաւորապէս որ մուր  
ու փորձանք եղած է իր ազապութեան եւ  
հակառակ իր բոլոր ճիգերուն՝ չկրնար աննըշ-  
մարելի ընել զայն : Արդէն վաղածանօթ զըր-  
կիցներ են : Զեռք-ձեռքի ճամբու թելը կը  
կծկեն :

— Մինչեւ եօրր քածը պիտի երթայ Մեկ-  
քոնին հետ, ո՛վ գիտէ թէ լեպրար Վառէն  
ի՞նչ թուղթ ու համայնի կապեր է փեռատին  
վրայ — նկատեց գեղի համբաներէն Մխոյի  
կնիկ Ասէն, որ ինքզինք Մեկքոնի ապագայ  
զոքանչը կը ձեւացնէր : Սկսաւ մօտիկնալ  
անոնց : Քանի մը հեղ չնխեց Գոհարը որ հե-  
ռանայ : Անիկայ չսեց : Յետոյ աւելի մօտիկ-  
նալով պօռաց Մեկքոնի երեսին. — « Հոգի՛ս,  
ախո՛ս չե՞ս դուն Վառէի փառիկ աղջկայ  
հետ կը վազվառէս, տես՛ս բոլոր ընտաւորներ  
վրադ կը ծիծղան » : Մեկքոն ամչնալէն տակն  
ու վրայ եղաւ : Իրա՛ւ, իրարու ձեռքէ բռն-  
ած, ժողով մղուլով կ'երթային, բայց Մեկ-  
քոնը բոլորովին միամիտ էր, սէրը չէր որ  
վինք մօտիկեցուցած էր Վառէի աղջկան, այլ  
միայն դրացութիւնը : Մեկքոն այս խօսքին  
վրայ նոր զգաց եւ անմիջապէս հեռացաւ Գո-  
հարէն : Վերջինը՝ որ գիտակից էր իր սիրուն,  
աւելի յուզուեցաւ, տեսնելով ինքզինքը նա-  
խատուած՝ սիրտը ելաւ ու մէկ կողմ քաշ-  
ուած սկսեց լալ : Արդէն շատ էին իր նա-  
խանձորդներն ալ, որոնք ծափ կը զարկէին  
տրս կողմէն : Կարելի չէ նկարագրել թէ  
գործող աղջիկը ի՞նչ յուզմունքով ու ի՞նչ  
վտով տուն ձգեց գինք այրի մօրկան գրիւը,  
երբ նստած ու սանդիւրքով բուրդ կը գզէր :  
Մազ մնացեր էր որ սանդիւրքին ատամները  
խրէին անոր մարմնոյն, եթէ մայրը ձեռքով  
չզրկէր զայն : Վառէն ինչ որ խնկեցաւ,  
Բուրբ մուրդ մէկդի բրած, Գոհարին պլլուե-  
ցաւ — « Ի՞նչ կայ, ի՞նչ եղաւ աչքիս լու-  
սիկ, ի՞նչ » : Գոհարը կը շարունակէր քուք-  
ալ, — Ըսէ, ի՞նչ եղաւ ձագուկս : Նա հա-  
զիւ հեղձամղձուկ ձէնով մը պատմեց իր զըլ-  
խուն եկածը : Վառէի կատաղութեան չափ  
չկար, ալուէքը մազ կը վերցնէր : Պահ մը  
քովքոնի իրար զարկած, անէծքներ սկսեց,  
Յետոյ երկար մտմտաց, Գոհարին մօտենա-  
լով մազերը փայփայեց, համբուրեց, արտա-  
պնդեց ու ասաց :

— Հոգ մ'էնիր, հոր փորոզը ինք կ'ինկնայ,  
ու խաւ եղնի իմ հոգուն, որ գքեզ բաղձանքիդ  
հասցնեմ . . .

Նորէն սանդիւրքը ձեռք առաւ :

(Շարունակելի)

ԳԵՂԱՄ

Արեւելեան Մամուլի վերջին թիւին մէջ  
հրատարակուած խմբագրական յայտարարու-  
թեան մը գոհութեամբ կը տեղեկանանք, թէ  
այդ գրական Հանդէսը, որ 32 տարիէ հետէ  
կանոնաւորապէս կը հրատարակուի Իզմիրի  
մէջ, կիսամսեայ ձեւով, 1903 յունուարի  
սկիզբէն շաբաթաթերթի պիտի վերածուի :  
Յաջողութիւն կը մաղթենք մեր համակրելի  
պաշտօնակցին՝ Հրանտ Էֆ. Մամուրեանի որ  
իր ողբացեալ հօրը մահէն ի վեր այնքան  
ձեռնհասօրէն կը վարէ անոր հիմնած թերթին  
Տնօրէն-խմբագրապետութիւնը :

§ Նոյնպէս գոհութեամբ կը ծանուցանենք  
թէ Հանրագիտակ մանկավարժական հանդէսը,  
որ ամիսը երեք անգամ կը հրատարակուէր,  
յառաջիկայ տարեգլխէն սկսեալ, շաբաթա-  
թերթի պիտի վերածուի :

## ԶԱՆԶՐՈՅԹ

Աշնան դաղջ գիշեր մըն է. հազիւ թէ  
ձաշը աւարտած՝ ձանձրոյթը կը պատէ զիս :  
Հայրս անկիւնը քաշուած՝ սրկառին ծուխերը  
կ'արծակէ անշուշտ ու մայրս կը կարգայ :

Ի՞նչ ընել որ վայրկեանները չճնշեն վրաս,  
տաղաուկը կը ծանրանայ սրախ վրայ : Պար-  
տէզ կելլեմ. մութ է, կատարեալ, քառօս-  
յին մութ, եւ սակայն ճամբաները աչքս գոց  
իսկ կրնամ գտնել արդէն : Թեթեւ, շատ թե-  
թեւ հով մը ծառերը կը խշրտացնէ. մութին  
մէջէն սեւ բաներ անորոշապէս վար կը գըլ-  
տորին երբեմն — ի՞նչալ սկսող տերեւներն  
են, որոնցմէ շատերը, դեռ կանանչ, կիւ-  
նան, երիտասարդ մեռնողներու պէս ու մէկ  
մասն ալ ծառին վրայ կը յամառին մնալ մին-  
չեւ որ աղէկ մը դեղնին, կեանքին ուժգնօ-  
րէն կառչած պառաւներու նման :

Մինչև այգիին ծայրը կերթամ . խարխա-  
փելով խաղողի ողկոյդ մը կը գտնեմ ու քա-  
նի մը հատ բերանս կը նետեմ . այդ քանի  
մը հատը բաւական կըլլայ որ ձանձրոյթս  
հոն ալ սպրդի ու մէկդի նետեմ ողկոյզը :

Վերադարձիս դէպ ի սերկեւիլի ծառերուն  
շարքին կողմը շեղում մը կընեմ ու սերկե-  
ւիլ մը կը բրցնեմ . Ի՞նչ անհամ է սակայն .  
բարկութեան չարժուժով մը քարի մը պէս  
կը նետեմ պտուղը՝ որ կերթայ չեմ գիտեր  
ո՛ւր կ'իյնայ իբր թէ ան բլլար ձանձրոյթիս  
պատճառը : Մո՛ւթ է : Անկէ ալ մարդ կը  
ձանձրանայ : Յետոյ ցուրտ ալ կը թուի օդը  
— ա՛ն ալ տաղակացուցիչ բան : Քայլերս դէպ  
ի տան լուսաւոր պատուհանները կը տանին  
զիս ու սնեակս կը փակուիմ :

Գրասեղանիս առջեւ , հայելիիս դիմացը  
կը նստիմ , ի՞նչ ընելու համար — ե՛ս ալ չեմ  
գիտեր :

Ժամեր պէտք է անցընել դեռ մինչև որ  
քունս բարեհաճի դալ . Դարանը կը քաշեմ ,  
խորչերը կը պրպտեմ , մէկ քանի հին նա-  
մակներ , յիշատակներ պարունակող թուղ-  
թեր կը գտնեմ . հազիւ քանի մը վայրկեան  
կը գրաւէ անոնց ընթերցումն ալ :

Դիրք մը կ'առնեմ ըստ բաղդին , կը բա-  
նամ . «Եւ Կալիփսէ կայր ի սուգ անմխիթար  
. . . » ո՛ւթ . . . անսաշ կարդալու գո՞ւր  
ունիմ :

Դրիչը ձեռքս կ'առնեմ ու բառեր , տողեր,  
դիրեր կը դժգծեմ , խենթ ու մենդ պատկեր-  
ներ , այլանդակութիւններ կը շինեմ թերթ  
մը թուղթին վրայ . Բան մը կուզեմ գրել ,  
գէթ ժամանակ անցընելու համար , բայց ի՞նչ  
— ես ալ չեմ գիտեր :

Ոտքի կելեմ , ետեւս գրադարանս կը կե-  
նայ . երկու կարգ դիրքերու վրայ կը պտտի  
նայուածքս առանց տեղ մը կենալու . եթէ  
մէկ հատ մը դուրս քաշեմ կէս մը , անմի-  
ջապէս տեղը կը մշեմ դարձեալ . բան մը կը  
փնտռեմ կարծես՝ որուն ինչ բլլալը ես ալ  
չեմ գիտեր : Եղբորս դասագրքերուն շարքին  
կիջնեմ . կառնեմ ու կը դնեմ զանոնք մէկիկ  
մէկիկ , — ընդհանրապէս եղբրքները մաշած ,  
կոլքերը պատռտած , մեղանոտած գրքեր —  
որոնք դպրոցականի օրերս կը յիշեցնեն ինծի,  
անգիտակից , ոչնչութիւններու մտահոգու-

թիւններով լեցուն օրեր՝ որոնց վրայ կը խն-  
դամ հիմա ու կ'անցնիմ :

Գրադարանը կը գոցեմ : Պզտիկ սենեակին  
մէջ՝ զոր չորս քայլով կը չափեմ՝ կը սկսիմ  
երթեւեկել , մէկ պտտէն միւսը , պատուհա-  
նէն — ուրկէ մութը կը խուժէ ներս — դու-  
ռը : Մէկ , երկու , երեք , չորս , կը չափեմ  
ու կը չափեմ երկայնքը սենեակին :

Եղբորս անկողնին քով կ'անդ կ'առնեմ .  
պզտիկը կիցով մը վերմակը նետած է վրայէն .  
կը գոցեմ ու զինքը կը դիտեմ . հանդարտօրէն  
կը քնանայ , գլուխը դէպ ի ետ , դէպ ի կըռ-  
նակը ծռած բարձին վրայ , ձեռքին մէկը ծալ-  
լած ծոծրակին տակ , քովէտի պառկած . թե-  
թեւ ու կանոնաւոր շնչառութիւնը միօրինակ  
փսրառքով մը կը խզէ սենեակին լուսթիւնը :

Ես ալ կուզեմ քնանալ անոր պէս , չուտ  
մը . բայց ծանրութիւն մը չեմ զգար արտե-  
ւանունքներուս վրայ որ կարենամ անկողն  
մտնել :

Սուր ճիչ մը կը պատռէ մութին թանձր  
խաւը հեռուէն , ու մինչև ինծի կը հասնի .  
չողեկառքին սոյն է . դեռ ժամը 3 է ուրեմն  
Կուլա՞յ սա սոյլը արդեօք թէ կը խնդայ .  
ի՞նչ կը բերէ անիկա ինծի իր ծոցին մէջ —  
ո՞վ գիտէ . . . :

\* \* \*

Գրասեղանիս քով կը դառնամ դարձեալ .  
ինքզինքս կը դիտեմ հայելիին մէջ . խենթու-  
թիւն , դէմքիս վրայ կուզեմ կարգալ ինչ որ  
սրտիս մէջ , ինքզինքիս մէջ անթափանցելի  
կը մնայ ինծի : Ո՛ւրկէ կուգայ սա ձանձրոյ-  
թը , ամէն բանի ձեռք երկարելու՝ բայց ամէն  
բան մէկդի ընելու տարտամ ձանձրոյթը՝  
Բան մը կուզեմ ընել . բան մը սակայն որուն  
ի՞նչ բլլալը ես ինքս ալ չեմ հասկնար . Հոգե-  
կան ինչ զարմանալի վիճակներ ալ կան , Տէ՛ր  
Աստուած :

Շունի մը հաչիւնը , փողոցին անկիւնէն ,  
պահ մը չեմ գիտեր ո՛ւր անդերը կ'առնէ կը  
տանի երեւակայութիւնս . տժգոյն լոյսերով  
հազիւ թէ աղօտ փողոցներէ կանցնիմ կը  
դառնամ երկվայրկեանի մը մէջ , մտքովս  
ամէնքն ալ ամայի են մտքիս պէս ու ես կը  
դառնամ ինքզինքս գտնելու համար դարձեալ  
հայելիիս դիմացը :

Ունայնութեան ստուերին պէս բան մը  
եկած սպորդած է կարծես ներսիդիս ու ծոյլ  
տատանումներով կը ծփծփայ հոն :

Հսկայ տաղտուկ մը կը գտնեմ շուրջս սա  
դիւերին ամայի լռութեան մէջ :

Պատին վրայ լուսանկարներուն կը նայիմ .  
անոնք ալ ինծի պէս կը ձանձրանան կարծես,  
սա տարրերութեամբ որ տեղերնին գամուած  
են անոնք , անշարժ , մինչ ես շարժելու ,  
աննպատակ շարժումներ ընելու ձանձրոյթն  
ալ ունիմ :

Գլուխս ձեռքերուս մէջ կ'առնեմ ու կը  
խօսիմ . ի՞նչ — ես ալ չեմ գիտեր . գաղա-  
փարներս ոստուկներ , խօլ ոստուկներ կընեն  
առանց տեղ մը կառչելու . երբեմն ուղղու-  
թիւն մը կ'առնեն ու կայծակի պէս կը սու-  
րան , բայց յանկարծ volte-face մը կընեն ու  
կը կենան :

Միտքս ուկէանին վրայ ծվացող նաւակ  
մըն է որուն առագաստները ձանձրոյթի խնկթ  
նովին քամած փքումներով կը լեցուին մէկ  
մը յանկարծ , վայրկեան մը ետքն ալ պարապ  
ու սմբած մնալու համար :

Լոյսէն ալ ձանձրոյթ կըզգամ հիմա . պի-  
տի մարեմ գայն ու անկողնիս մէջ նետուիմ ,  
քիչ մըն ալ վերմակին տակ դարձդարձելու  
համար մինչեւ որ քունը գայ միտքս ու մար-  
մինս անդորրեւու :

— Գամշաթքա . . . թերակզղի . . . կըսէ  
եղբայրս անկողնին մէջէն , մինչ ես կը հան-  
ուիմ :

Այս օրուան առած , կամ վաղը առնելիք  
դասը կը զառանցէ տղան քունին մէջ :

Քաղքին մեծ ժամացոյցը , հեռուէն , հա-  
տիկ հատիկ կը դարնէ . հարուածներն ալ  
անոր ձանձրոյթին հառաչները կը թուին ըլ-  
լալ , տարտամօրէն երկարաձգուելով ու հատ-  
նելով մութին լռութեանը մէջ , կամաց կամաց ,  
իրենք ալ առանց գիտնալու թէ դէպ ի ո՛ւր  
կերթան ու ի՞նչ ըսել կուզեն — ինծի պէս :

ՓՍՅԱՍԱ

## ԻԶՄԻՐԻ ՈՃԻՐԸ

— օօօօօ —

Երկուշաբթիէն ի վեր , մայրաքաղաքիս  
հայ համայնքը դառն տպաւորութեամբ մը  
համակուած է՝ Իզմիրի մէջ կատարուած խուժ-  
դուժ եղեռնագործութեան լուրին վրայ , որուն  
տխուր մանրամասնութիւնները հետզհետէ կը  
պատմեն օրաթերթերը , Իզմիրի Հայոց ամէ-  
նէն պատկառելի դէմքերէն մէկը . Մաթէոս  
էֆօ . Պալեօզեան , քսմմեալի սփրի մը զոհ  
գնաց . սա եղբրական պարագաներուն մէջ :  
Հօկա . Յ , հինգշաբթի առտու , Պալեօզեան էֆօ .  
Քարաթաչի իր ծովեզերեայ բնակարանէն վա-  
ճառատունը կ'երթար , երբ միգրէններու  
շուկային մէջ անծանօթ երիտասարդ մը կը  
մօտենայ իրեն եւ կը սկսի խօսակցիլ հետը .  
բաւական տեղ յառաջանալէ ետքը , անծա-  
նօթը յանկարծ ընկալուէր մը կը հանէ գրպա-  
նէն ու երկու հարուած պարպելով՝ մէկը գան-  
կին , միւսը քունքին՝ դիտապաստ դետին կը  
փռէ առոյգ ծերունին : Մահը վայրկեանական  
կըլլայ : Ոճրագործը իսկոյն կը սկսի փախչիլ  
դէպի Բէսթանէ Բաղարը , ճամբան շարունակ  
կրակ ընելով ձեռքի վեցհարուածեանովը ,  
զինքը հալածողները ահաբեկելու համար :  
Սակայն , Մուսթաֆա էֆօ . անունը զինուոր մը  
եւ Ահմէտ աղա անուն պահապան մը , առանց  
կարեւորութիւն տալու հրազէնին սպառնա-  
լիքներուն , կը յաջողին ձերբակալել մար-  
դասպանը եւ ոստիկանութեան կը յանձնեն :

Ասդին , Պալեօզեան էֆօ . ի վաճառատան  
պաշտօնեաները եւ անցորդներ վիրաւորեալին  
շուրջը փութալով իր գրասենեակը կը փո-  
խադրեն ուր կը հասնին իսկոյն ընդհ . դատա-  
խազը , ոստիկանութեան վերատեսուչը եւ  
բազմաթիւ բժիշկներ որոնք մահը կը հաստա-  
տեն եւ օրինական քննութիւններէ ետքը  
թաղման արտօնութիւն կուտան : Հանգուց-  
եալին մարմինը իր վաճառատունէն բնակա-  
րանը կը փոխադրուի , քաղաքին բոլոր հա-  
սարակութեանց եւ մասնաւորապէս Հայերուն  
դառնակսկիծ արտայայտութեանց մէջտեղ .  
ամէն աղգի խուռն բաղմութիւն մը կը հետե-  
ւէր դադարին , վշտանար դէմքով եւ շատեր

արտասուագին : Իսկ ընտանեկան յարկին տակ պարզուած սրաայոյզ տեսարանը անհկարարելի է :

§ Մատթէոս էֆ. Պալեօղեան , որ դեռ քանի մը ամիս առաջ իր երէց եղբայրը հողին յանձնելու գծադրութիւնը ունեցաւ , ինչպէս Իզմիրի՝ նոյնպէս Կ. Պոլսոյ մէջ հանրածանօթ էր իր մեծ հարստութեամբը եւ առեւտրական ասպարէզին մէջ զրաւած կարեւոր դիրքովը : Կորովի աշխատութեամբ եւ խեղացիութեամբ հասած էր այս յառաջդիմութեան , միեւնոյն ատեն վայելելով Կոյս. կառավարութեան վստահութիւնը որուն շնորհիւ կ'անդամակցէր Նահանգին Իտարէի ժողովին , զանազան հանրօգուտ հաստատութեանց եւ արժանացած էր Իւլայի Ա. աստիճանին եւ պատուանշաններու : Տղայ հասակէն Իզմիր գաղթած էր իր ծննդավայրէն , Կեսարիոյ Թալաս գիւղէն , եւ առեւտրական ասպարէզին մէջ իր նախափորձերը ըրած էր հօրը երկաթի վաճառատան մէջ որուն գործառնութիւնները զարգացուց եւ ընդլայնեց , հետզհետէ ձեռք զարնելով նաեւ աֆիօնի եւ բամպակի վաճառականութեան : Իր հարստութիւնը մինչեւ կէս միլիոն ոսկի կենթադրուի : Վերջին տարիներուն մէջ մասնաւոր սէր տուած էր երկրագործութեան , եւ մեծկակ գումարներով գնած էր ագարակներ որոնք Իզմիրի շրջականերուն ամէնէն գեղեցիկները կը համարուէին :

§ Թէեւ հանդուցեալը իր հարստութեան համեմատութեամբ նշանաւոր բարեգործութիւն մը չէր ըրած , եւ տակաւին յայտնի չէ թէ կտակ մը ունի՞ թէ ոչ , բայց իր քսակը բաց էր ամէն անթիւ , եւ առատօրէն կուտար զպրօցի , եկեղեցիի , հիւանդանոցի , որբանոցի : Առանց դործի եւ առանց դրամի Իզմիր պանդխտոց Հայեր ամէն ատեն վայելած են իր նպաստները եւ օժանդակութիւնը : Հանրային բարեգործութեանց շարքին մէջ կը յիշուի թէ , տարիներ առաջ , Կեսարիոյ Ս. Կարապետի վանքին 1500 ոսկի պարտքը վճարած է . իսկ վերջերս , իր հանդուցեալ եղբորը յիշատակին , երկու շէնք նուիրեց Իզմիրի երկսեռ Որբանոցին , եւ այս անթիւ եղած երախտագիտական արտայայտութիւնս

ներէն այնքան զգածուած էր որ մտադրութիւն ունէր , ինչպէս դրուեցաւ , մեծ ու հասութեաբեր շէնք մը կառուցանել տալ իզմիրի կրթական հաստատութեանց նուիրելու համար :

Մատթէոս էֆ. Պալեօղեան 70 տարեկան էր եւ ամուսնացած : Իր անակնկալ ու դառնաղէտ մահը անմիջեւ տուգի մէջ կը թողու իր այրին՝ Տիկին Կիւլիանէ ու զաւակները՝ Օր. Արուսեակ եւ Գաւնիկ ու Վահան էֆ. իք Պալեօղեան :

Յուդարկաւորութիւնը մեծահանգէս կերպով կատարուեր է Ս. Ստեփաննոս եկեղեցիին մէջ , նախադահութեամբ Տ. Մեղքեսեղիկ Սրբազանի եւ մասնագիտութեամբ ո՛չ միայն Իզմիրի ամբողջ հայ համայնքին , այլ նաեւ ամէն աղբի հասարակութեանց ներկայացուցիչներու :

§ Պալեօղեան էֆ ի սպաննիչը՝ իր հարցաքննութեան մէջ՝ սա յայտարարութիւնը ըրած է ոստիկանութեան . « Պարսկաստանի Որմի գաւառը ծնած եմ . Անունս է Պետրոս Աղիզոֆ . տարիքս 25 : Տարի մը առաջ , գործ գտնելու համար Ռուսիա գացի եւ Մանուկ Էմմանուէլեան անուն անձի մը քով ծառայութեան մտայ , Ժամանակ մը ետքը աէրս ինծի 50 ոսկի տուաւ եւ երթուգարձի ծախքս ալ հոգալով Իզմիր զրկեց զիս : Հոս հասայ օդոստոս 1ին : Քիչ ետքը , նամակ մը ստացայ Մանուկ Էմմանուէլեանէն որ կը յանձնարարէր ինծի՝ սպաննել Մատթէոս էֆ. Պալեօղեանը որուն հետ վեճ ունէր : Այդ օրէն ի վեր առիթը կը փնտռէի արագ հրամանը գործադրելու եւ այսօր միայն կրցայ յաջողիլ » : Մարդասպանին վրայէն գտնուեր են լէվովներ 160 փամփուշտ , սուլիչ մը , 10 օսմ. ոսկի , ոսկի ժամացոյց մը , դանակ մը եւ չոգենաւի սոմսակ մը որմէ կը հետեւցուի թէ ոճիւրդ գործելէն ետքը Իզմիրէն փախչիլ մտադրած էր :

§ Ուրիշ տեղեկութեան մը նայելով , զոր նոյնպէս արձանագրեցին օրաթերթերը , սճրագործը ամիսուկէս առաջ սպառնական նամակ մը ուղղելով Մատթէոս էֆ. Պալեօղեանի՝ 500 ոսկի պահանջած է եղեր անկէ :

## ԵՐԵՔ ՏԱՐԻ ԱՐԺԱՆԹԻՆԻ ՄԷՋ

### ՌՕՍԷՆ ՏՕՐԻՆԵԱՔԻ ՌԻՂԵԻՌԱԿԱՆ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Բաւական տեղ քաջքշուեցանք այդպէս , մինչեւ որ երկուքս ալ կեցանք՝ անակնկալ պատուարի մը զարնուելով :

Մթնոլորտը աւազով լեցուած էր , եւ չէինք կրնար բան մը տեսնել : Աւազի հատիկները ուժգնօրէն կ'իջնէին մեր վրայ , եւ երեսնիս կը ծակծկէին :

Ձեռքերս տարածեցի պահ մը , հասկնալու համար թէ ի՞նչ էր այն պատուարը որ մեզ կեցուցած էր այդպէս :

Բայց խեղդոյն սոսկումով ետ քաշեցի :

Մեզ կեցնող պատուարը տաք , այրուցիկ բան մըն էր :

Ի՞նչ կրնար ըլլալ արդեօք . . . :

#### Վ Ե Ր Ջ Ա Ք Ա Ն

Փոքորիկը կը դադրի . — Տօմէնկօ ինչպէս գտաւ իր կիները , և ինչպէս վրէժ լուծեց . — Ձիերու քալան մը . — Պաննորդութիւն մը . — Ձիեր՝ որոնց վրայ յանկարծ եղբիկներ կը յայտնուին . — Հանդիպում արծաթեքինեան վիտորներու . — Բաժանում . — Երկու նոր առաջնորդներ . — Շիվիլքօ քաղաքը . — Վերադարձ դէպի Պուէնտօ-Ալրէս :

Այդ նոր սոսկումը սակայն շատ չտեւեց : Մեր ձիերն էին , որոնք իրենց կարգին փոթորիկէն սարսափահար , պառկած էին հոտ , կռնակներն հովին տուած :

Մենք ալ իրենց քով սեղմուեցանք :

Հովը կը սուլէր միշտ , եւ աւաղները կտոր կտոր կ'ընէին մեր հագուստները :

Բաւերտօն այդպէս ժամեր տեւեց , եւ մինչեւ որ դադրեցաւ՝ հոգինիս բերաննիս եկաւ :

Ալ դուք կրնաք երեւակայել թէ ի՞նչ բան մը քնացանք այն գիշերը :

. . . Յաջորդ առտուն , Տօմէնկօ վերջապէս գտաւ մեզ :

Մեր ձիերը շատ խղճալի կացութեան մը մէջ կը գտնուէին , բայց սատանորդի հնդիկը ապահովուց զմեզ :

— Հող մի՛ ընէք , ըսաւ , ծուխը դուր տե-

սած էինք , իրաւ է , Հնդիկներու կայքէ մը կը բարձրանար , բայց անպիտանները այս միջոցիս մեկնած են իրենց բանակետղէն , հոս վին քչած տարած առարկաները գտնելու համար . բանակետղին մէջ հիմայ կիներ ու աղաքներ միայն կան : Ասիկա բարերազգութիւն մըն է , որովհետեւ պիտի կրնանք առանց կռուի ետ առնել գողցուցած ձիերնիս : Միւս կողմէ , վրէժ մը լուծած ըլլալու համար ես ալ իրենց ձիերը պիտի գողնամ , եւ այնչափ հեռուները պիտի առնիմ , որ ալ բնաւ չկարենան անոնց հետքը գտնել : Օ՛հ , աճապարեցէք , որովհետեւ կրնայ ըլլալ որ շուտ ետ դառնան :

Հովը ամէն բան առած տարած էր : Ոչ թամբ ունէինք , ոչ ալ ո՛ր եւ է կազմած : Մերի ձիերուն վրայ ցատկեցինք , եւ ամբողջ օրն ու գիշերը յառաջացանք , առանց բնաւ դադար առնելու :

Տաժանելի ճամբորդութիւն մը եղաւ առիկա , եւ շա՛տ յոգնեցուց մեզ :

Առտուն կանուխ , արշալոյսին , վերջապէս Հնդիկներու բանակետղը հասանք , ու գտանք Տօմէնկոյի ձիերը՝ որոնք կ'արածէին ուրիշ յիստերի մօտ ձիերու հետ : Անոնց շուրջը կը գտնուէր նաեւ ոչխարներու հօտ մը :

Տօմէնկօ՝ ուրախութեան աղաղակ մը արծակեց՝ եւ ըսաւ ոչխարները ցոյց տալով .

— Ահաւասիկ մեզի ուտելիք եւ հագնելիք . այս ոչխարները շա՛տ պիտի զերացնեն մեր ճամբորդութիւնը :

Ցատկեց ձիէն վար , եւ քանի մը վայրկեանի մէջ բաղմաթիւ ոչխարներ մօրթեց եւ կտոր կտոր ըրաւ , անոնց վրայի մօրթը խնամով հանելէ վերջ :

Քիչ ետքը , երկու Հնդիկները զիս մինակ թողուցին մեր պաշարին իրր պահապան , եւ իրենց լաժծօները առնելով հեռացան գոյին :

Կէս ժամ վերջ , երկուքն ալ վերադար-

ձան առոյգ ձիերու վրայ նստած : Ուրիշ երկու ձիեր ալ առած էին իրենց հետ , որոնցմէ մէկը ես ինծի համար ընտրեցի : Միւսին վրայ բեռացրինք մեր պաշարը :

Տօմէնկօ , Օնօրիօյի հետ կրկին հեռացաւ զիս դէպի հիւսիս ճամբու դնելէ վերջ :

Քիչ մը տեղ յառաջացայ , բայց շատ չանցած , կեցայ սարսափահար :

Ահռելի աղմուկ մը փրթած էր ետեւէս :

Հնդիկներու ձիերն էին՝ զորս Տօմէնկօ եւ Օնօրիօ վախցուցած էին , եւ որոնք , անոնց կողմէ հետապնդուած՝ դէպի իմ կողմս կը սուբային վրնջելով :

Մէկ երկու ժամ տեւեց այդ վազքը , ուրկէ վերջ դադար առինք :

Մքանչելի եւ շատ լաւ սնած ձիեր էին ամէնքն ալ : Միայն թէ պէտք էր յոգնեցուցիչ հսկողութիւն մը ընել անոնց վրայ , որովհետեւ այս կողմերու ձիերը , միշտ իրենց վարժուած տեղը կը վերադառնան՝ ազատ թողուելուն պէս : Խուսափելով ձի գնողները ստիպուած են գոնէ տասնըհինգ օրի չափ խիստ հսկողութեան մը ենթարկել զանոնք : Այլապէս , խմբովին կը փախչին եւ կը վերադառնան հոն՝ ուրկէ գնուած էին :

Գիշերուան մօտ գետի մը եզերքը հասանք , եւ որոշեցինք հսկողութիւնը կարգաւ կատարել : Նախ Տօմէնկօ արթուն մնաց , յետոյ Օնօրիօ , եւ վերջ ի վերջոյ կարգը ինծի եկաւ : Երբոր զիս արթնցուցին , ձիուս վրայ ելայ , բայց միւս ձիերը այն աստիճան հանդարտ կը կենային որ շարունակեցի մըրափել :

Աղմուկ մը սակայն ընդոտտ արթնցուց զիս : Միեւնոյն ատեն լսեցի Տօմէնկօյի ձայնը :

— Ձիերը , ձիերը , կը պոռար :

Բացի աշուրներս : Արշալոյսը սկսած էր ծագիլ : Մեզմէ երկու հարիւր քայլ հեռուն , ձիերու ամբողջ խումբ մը կը սուբայ կատաղի արագութեամբ մը :

— Ինծի՛ նայեցէ՛ք , մեր ձիերը կը փախչին , պոռացի իմ կարգիս , ու ձիս խթեցի առաջ , անոնց ճամբան կտրելու համար :

Լսեցի որ Տօմէնկօ բաներ մը կ'ըսէ , բայց լաւ մը չհասկցայ :

Անանկ կարծեցի թէ փութալու պատուէր

մը կու տար ինծի , եւ ա՛լ աւելի երազեցի ձիուս ընթացքը :

Այնչա՛փ շուտ կը վազցնէի որ չէի կրնար չնչիլ :

Այդպէսով , տասը մէթրի մը չափ անցայ փախստականները :

Միայն թէ պէտք էր զանոնք կեցնել :

Յանկարծ միտքս ինկաւ Տօմէնկօյի ի գործ դրած միջոցը :

Ձիս կեցուցի իսկոյն , եւ ձիերը ետ դարձնելու համար սկսայ սոսկալի աղաղակներ արձակել :

Ձիերը սակայն կեցան , եւ անոնցմէ իւրաքանչիւրին վրայ մէյ մէկ Հնդիկ երեւցան , սպառնալից նայուածքներով , ու նիզակին բարձրացուցած :

Բարեաղղարար ինքզինքս չկորսնցուցի , եւ սկսայ դէպի իմ ընկերներուս կողմը փախչիլ անօրինակ արագութեամբ մը :

Կէս ճամբան , արժանթիւնեան ձիաւոր զինուորներու խումբ մը ելաւ զիմաց :

Այդ խումբն ալ ձիերը կը հալածէր :

Ինծի բնաւ կարեւորութիւն չառին , եւ սկսան շարունակել իրենց հետապնդումը , որ չեմ գիտեր թէ ինչպէ՛ս վերջ գտաւ :

Երբոր երկու ընկերներուս քով հասայ , տեսայ որ մեր ձիերը հանդարտօրէն կը ճարակին՝ Տօմէնկօյի հսկողութեան տակ :

— Պա՛ւօ , ձայնեց ծերունի հնդիկը , մինակդ այդպէս յիսուն հնդիկ կը հետապնդես առանց վախնալու :

Ես իմ սխալս հասկցած էի : Փախչող ձիերը կարծած էի որ մերիններն են , մինչդեռ ուրիշ Հնդիկներու են եղեր , որոնք մօտակայ դաշտային բնակարան մը կողոպտած եւ մէկ քանի հոգի սպաննած ըլլալուն համար այդպէս կը հետապնդուէին արժանթիւնեան զինուորներու կողմէ :

Անպիտանները հալածուած ատեննին՝ ինքզինքնին կը սահեցնեն ասպանդակին մէկ կողմին վրայ , եւ ձիուն փորին վրայ կ'երկնան , ետեւնուն արձակուած գնդակներէ կամ նիզակներէ զերծ մնալու համար :

Այն աստիճան վարժ են , եւ ա՛յն աստիճան աղէ՛կ կը պահուըտին որ նոյն իսկ մօտէն տեսնող մը բնաւ չի կասկածիր թէ ձիաւորներ կան փախչող ձիերուն վրայ :

ես ալ այդպէս կարծած էր :

— Շիրտակը աղէկ յանդգնութիւն , յիսուն հոգիի վրայ յարձակիլ , ըստե՛ն Տօմէնիօ , որ ինքն ալ անառնկ կարծած էր թէ ես Հնդկիները տեսած ու հետապնդած էի զանոնք :

Չուզեցի իմ մասին կազմած այդ աղուոր քաղաքարը աւրել :

— Բայց անառնկ կարծեցի թէ , պատասխանեցի , դուք ալ ինծի պիտի հետեւիք :

— Օհ , չիտակը քեզի պէս մէյ մէկ մասունք չունինք վրանիս , այդչափ յանդգնութեամբ կուրծքերնիս նիզակներու առջեւ պարզելու համար :

Եւ աս ըսելէն վերջ , Տօմէնիօ կրկին սկսաւ ներբողել իմ երթադրական քաջութիւնս :

. . . Քանի մը օր կեցանք հոն՝ հանգիստ առնելու համար :

Երբոր ճամբայ պիտի ելլէինք , յայտնեցի ընկերներուս թէ մտադիր եմ Պուէնոս-Այրէս վերադառնալ :

Իրաւ է որ ինծի համար չա՛տ դժուար պիտի ըլլար այդ երկու հաւատարիմ ընկերներէս բաժնուիլ , բայց վերջապէս այդ արկածներու կեանքէն ալ բաւական ձանձրացած էի :

Մանաւանդ որ տակաւ կրնայի վրայ տալ առողջութիւնս , ինչ որ ամէնէն անտանելի բաներէն մէկը պիտի ըլլար այդ դաշտերուն մէջ՝ ուր ո՛չ բժիշկի հանդիպած էի , ոչ ալ դեղարանի :

Երկու ընկերներս ալ ցաւ յայտնեցին այդ վայրն , եւ ըսին թէ ինծի վարժուած ըլլալով , մեծ վիշտով պիտի բաժնուէին ինձմէ :

Այդ օրերուն , Շիվիլքօ գացող երկու կօշօներու հանդիպեցանք , եւ ես այդ առիթէն օգտուելով , հրաժեշտ տուի Տօմէնիոյի եւ Օնօրիոյի , ու երկու կօշօներուն հետ ուղղուեցայ դէպ ի հիւսիս :

Տօմէնիօ եւ Օնօրիօ մեծ ցաւով բաժնուեցան ինձմէ , եւ իրենց կարգին ուղղուեցան դէպ ի արեւելք :

Իմ երկու նոր առաջնորդներս լաւ երեւոյթ մը չունէին բնաւ : Տեսնող մը աւազակ պիտի կարծէր զանոնք : Եւ սակայն շատ սիրով վարուեցան ինծի հետ :

Ճամբան զրեթէ հանգիստ անցուցինք : Որտեք կ'ընէինք ուտելիք ճարելու համար , եւ կը յառաջանայինք առանց ինքզինքնիս յոգնեցնելու :

Այդ կերպով անցանք Սալամօ դետը , եւ հասանք Շիվիլքօ քաղաքը որ 7—8000 բնակիչ ունի , եւ կը գտնուի Պուէնոս-Այրէսի արեւմտեան կողմը , 160 քիլօմէթը հեռու : Երկաթուղիի գիծ մը՝ երկու քաղաքները իրարու կը միացնէ : Հողագործութեան համար չա՛տ բանուկ կեդրոն մըն է , եւ իր շրջակահերթուն մէջ մեծաքանակ արմտիք կը մշակուի :

Հոն ծախեցի ձիս , եւ քիչ շատ շնորհքով հագուստ մը գնելէ վերջ , չոգեկառք մտայ , եւ ուղղուեցայ դէպի Պուէնոս-Այրէս :

Արկածներուս վերջակէտը դրուած էր :

### ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՀԱՆԳԷՍ

Մայրաքաղաքիս սեղանաւորական դասուն պատուաւոր անդամներէն Թագէսո էֆ. Հանէսեանի որդւոյն Բիւզանդ էֆ. Հանէսեանի պսակադրութիւնը՝ Օր. Նազենիկ Մ. Պալլարեանի հետ՝ կատարուեցաւ երկուշաբթի օրը , Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին որ երկու կողմի ազգականներու եւ համակիր բարեկամ հրաւիրեալներու բազմութեամբ մը լեցուած էր : Տաճարը ամբողջովին գորգերով ծածկուած ու բոլոր ջահերը վառուած էին . խորանն ալ շքեղապէս լուսադարձուած էր : Հրաւիրեալներուն մէջ մասնաւորաբար կ'երեւային Հանէսեան եւ Պալլարեան ընտանիքներու բոլոր անդամները , Ռօպէրթ Գոլէճի բարձր-դասէն պատգամաւորութիւն մը , ի պատիւ իրենց երբեմնի դասընկեր՝ Բիւզանդ էֆ. Հանէսեանի :

Հանդէսին նախագահեց Ս. Պատրիարքը : Ներկայ էին նաեւ Տ. Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեան եւ Տ. Գէորգ եպիսկոպոս Երէցեան , վարդապետներ ու քահանաներ , Զեռնատուութիւնը կատարեց հարսին ու փեսին միանգամայն տաներէց՝ Արիստակէս քահանայ Վարժապետեան : Կնքահայրն էր փեսին մեծ եղբայրը՝ Դանիէլ էֆ. Հանէսեան , որուն անդրանիկ որդին՝ Միհրան էֆ. Հանէսեան փոխանորդաբար բռնեց խաչը : Գինիի օրհնու-

Թենէն վերջ, Ս. Պատրիարքը բեմ ելլելով, պարագային յարմար քարոզով մը բացատրեց ամուսնութեան նուիրականութիւնը, ըստ որում նոյն ինքն Աստուած օրհնեց, ըսաւ, ամուսնութիւնը, հրամայելով «Աճեցէ՛ք եւ բազմացարուք եւ լցէ՛ք գերկիր», եւ մեր նախնի Սուրբ Հարք եւս զայն նուիրագործած են Եկեղեցւոյ մեծ խորհուրդ կոչելով զայն: Ապա նորապսակ ամուսին ուղղեալ դրուատալից խօսքերէ վերջ, Ն. Սրբազնութիւնը մաղթանքներ ըրաւ՝ Հանգստան եւ Պալլարեան ընտանիքներու այս երկու շառաիղներուն միութիւնը օրհնելով:

Արարողութեան վերջ, հրաւիրեալները առջնորդուեցան Սըլանտիար սրահը, ուր տեղի ունեցան շնորհաւորութիւնները եւ կարդացուեցան զանազան գաւառներէ հասած բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ: Սըլանտիար սրահը յատկապէս այս առթիւ շքեղապէս զարդարուած էր գորգերով ու բնական ծաղիկներով եւ նորապսակներուն նուիրուած շքեղ ծաղկեփունջերով: Նուագածուններու ընտիր խումբ մը, հրաւիրեալներուն սրահ մը տած ատեն, Համիտիէ քայլերգը նուագեց: յետոյ ուրիշ կտորներ, Ներկաները պատուաւորուեցան հարսանեկան ճոխ շքասեղանով մը: Ս. Պատրիարքը եւ միւս եկեղեցական Հայրերն ալ ուրիշ մասնաւոր սրահի մը մէջ պատուաւորուեցան: Պարերը շատ ոգեւորեալ ու շատ կանոնաւոր եղան: Գիշերը հարիւր հոգինոց սեղան մը արուեցաւ Սըլանտիարի մէջ:

Այս բարեգէպ ամուսնութեան առթիւ օրաթերթներուն կողմէ յայտնուած հրապարակային շնորհաւորութեանց կը ձայնակցի նաեւ Մանիսի խմբագրութիւնը, Հանգստան ու Պալլարեան ընտանիքները ծանօթ ըլլալով ո՛չ միայն առեւտրական ու սեղանաւորական հրապարակին վրայ իրենց բարեսիրական նուիրատուութիւններովը: Այս առթիւ կը յիշատակուի թէ Թաղէսս էֆ. Հանգստան սր իր ծննդավայրին Արաբկիրի մէջ՝ արդէն իսկ աղջկանց վարժարան մը հաստատած է 500 ոսկի ծախքով, մտադրութիւն ունի հաստեարներ կալուածով մը ապահովել այդ վարժարանին ապագան:

Մասնաւորապէս Ս. Փրկչի Հիւանդանոցը դրամական բաւական նուէրներ ստացաւ այս հարսանեկան հանդէսին առթիւ, փոխան ծաղկապակի: Յիշենք նաեւ, թէ Օր. Նազենիկ Պալլարեան — այժմ Տիկին Բ. Հանգստան — լրագրութեան մէջ ալ իր համեստ տեղը ունեցած է, տարիներէ ի վեր աշխատակցելով Արեւելքին որուն մէջ, Թերթօնի ձեռով, կը հրատարակուին իր «Ընտանեկան Նամակներ»ներու եւ կարգ մը ուրիշ գեղեցիկ զբոսած քննարկ յարգմանութիւնները:

### ԿԻԼԻԿԻՈՅ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Խառն Ժողովն այս հինգշաբթի առաւօտ դումարուեցաւ Ղալաթիոյ Խորհրդարանը նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր եւ տեղապետութեամբ Տիգրան էֆ. Եւստֆեանի: Կրօնական Ժողովէն ներկայ էին Պատր. Փոխանորդ Սրբազանը, Տ. Եղիշէ Եպիսկ. Դուրեան, Տ. Յովհաննէս Շահպաղեան եւ Տ. Կարապետ Սանտալճեան Ա. քահանաները, իսկ Քաղաք. Ժողովէն՝ Խտրեան Գրիգոր, Սէթեան Մինդան, Դարակէօղեան Գրիգոր, Տէմիրճիպաշեան Սեպուհ, Աստեան Մկրտիչ եւ Տէր Ներսէսեան Տիգրան էֆ. ներք: Նկատողութեան առնուեցաւ Բ. Դրան կողմէ զրկուած ծանուցադիրն ի պատասխանի Պատրիարքական Թագրիրին: Ընտրելի նշանակուեցան Տ. Բարթօղլիմէոս Արքեպիսկ. Չամեան, Տ. Սահակ Եպիսկ. Խապայեան եւ Տ. Մովսէս Եպիսկ. Կէօմրիւքճեան: Ժողովն որոշեց անմիջապէս հեռագրաւ հրահանգ ուղղել Պատրիարքարանի պատուիրակ Տ. Մովսէս Եպիսկ. ի եւ Սոոյ Տեղապահ Տ. Կիրակոս Եպիսկ. ի, որպէս զի Ընտրողական Ժողովը դումարուի ի նիստ եւ կատարելով Կաթողիկոսական ընտրութիւնը, տեղեկագիրն ուղարկէ Պատրիարքարան: Հրահանգ արուեցաւ նաեւ որ Ընտրողական Ժողովը չըրուի ընտրութիւնը կատարելէն ետքը, այլ սպասէ Պատրիարքարանի հրահանգին:

Արժօնատէր Կ. Ս. Իիթիլճեան

Տպագրութիւն Ե. ՄԱՏՈՒՆՈՍԵԱՆ

Կ. Պոլիս, Ֆինանսերար եօգուշու. Թիւ 27

ԱՊՐԻԼԻ ՎԱՅԱՌՈՒՄ

ՎԱՅԱՌՈՒՄԻ ՇԷՐՄԱՆ



ԱՊՐԻԼԻ ՎԱՅԱՌՈՒՄ  
Յաջաբար ընթացող  
համար

Վերջին գրք  
Եթե կուզե՞ք ամեն  
սեփական գործարարներին  
ունենալ՝ գրեմք  
Կ. Պոլիս, Ուկրաինայ  
Շուկայ մեծ փողոց թիվ 13

Շերմայի վանդառատները ունի եւրոպական  
ճաշակով պատրաստուած գործարարներին  
ամենքն ալ տալիս արագ և արագ աշխատանք  
Շերմայի վանդառատները գրեմքն ամենքն  
Շերմայի վանդառատները ունի արագ աշխատանք  
տալիս ամենքն

Շերմայի վանդառատները ունի ժամանակակից  
եւ արագ աշխատանք տալիս ամենքն (պատճառ)

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հարկւրին Բան կանխիկ, մնացածին հա-  
մար շարժական հարկւրին հինգ փութով  
Կանխիկ գնովին համար 100ին 5 գրք  
Գործածուած գործարարներին եթե վնաս-  
ուած չեն՝ 100ին 10 գրքով ևս կանխուին



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի  
մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքե-  
նայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը  
անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատու-  
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ  
դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է  
Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

## ՍԻՆԿԵՐ

(ՀԱՅԹԱՅՐԻՉ ԿԱՅՍ. ՓԱՆԱՏԱՆ)  
The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի եւ ոտքի եւ ձեռքի  
միանգամայն մեքենաներ  
կը գտնուին

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն  
աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ  
դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի  
մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գտնէ

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառա-  
տանց մէջ

- |         |                                                      |
|---------|------------------------------------------------------|
| ԲԵՐԱ    | { 1. Մեծ փողոց, Պոն Մառէի դէմ, թ. 343 եւ 343 կրկին   |
|         | { 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ             |
| ԿԱԼԱԹԱ  | { 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը                      |
|         | { 2. Գարաքէօյ, Թրամպէյին կայարանին դէմ               |
| ՊՈԼԻՍ   | { 1. Սուլթան Համամ, թիւ 2                            |
|         | { 2. Սուլթան Պէյաղիտ, Թրամպէյին կայարանին դէմ, թ. 13 |
| ՍԿԻՒՏԱՐ | Չարը Պոլս, թ. 120                                    |

Դասերը եւ նորագոյններն ձեռքի

Կասաբեալ երախաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց,  
թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս պէյ Տիւղօղլուի տունը

ՍԵՐՎԱՆՏԻՆԵՐԻ  
ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հրատարակուեցաւ

ԸՆԴԱՐՁԱԿ

# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՕՐԱՅՈՅՑ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ

1903 ՏԱՐԻՈՅ

(ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ)

Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆԻ սոյն ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՅՈՅՑԸ, որ երկարամեայ կանոնաւոր հրատարակութեամբ հաստատուն համբաւ մը ունի, յառաջիկայ տարուան համար ի լոյս ընծայուած է չա'տ աւելի ճոխ բովանդակութեամբ մը որ ամէն կարգի ընթերցողներու համար օգտակար ու շահեկան կը դարձնէ զայն:

Գին 3 դր.

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՕՐԱՅՈՅՑԻՆ ՀԱՄԱՌՈՏՆ ալ հրատարակուած է եւ կը գտնուի բոլոր հայ գրավաճառներուն քով:

Գին 1 դր.

Վաճառման կեդրոնատեղի, Յ. Մատթէոսեան թղթավաճառանոցը Պայսլ Հաւուզ, Կ. Պոլիս:

## ԻՒՆԻՕՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐՁ 1828-1829

### ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂ

|                                    |                  |
|------------------------------------|------------------|
| Մինչեւ 1899ի վերջը հասուցեալ շեառք | 240,000,000 Ֆր.  |
| 1899ին գանձուած ապահովագրին        | 19,500,000 »     |
| Դրամագլուխ եւ պահեստ               | 105,000,000 »    |
| Ապահովագրեալ գրամագլուխ            | 18,000,000,000 » |

### ԿԵՆԱՑ ՃԻՒՂ

|                                    |                |
|------------------------------------|----------------|
| Մինչեւ 1889ի վերջը հասուցեալ շեառք | 99,000,000 Ֆր. |
| Ընթացիկ ապահովագրութիւնք           | 253,000,000 »  |
| Դրամագլուխ եւ պահեստք              | 150,000,000 »  |

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիօն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաւխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏԵՆԼ՝ ԱՐԵԻՆԼ՝ՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց զեղչեալ գիներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո'ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիօնի ապահովագրութեան ԶԵՐԾ են այն վնասներէն եւ լուսախաբուրիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ Եանաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ գրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան գրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԺԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս, Կալարա, Թահապուրուն խան, Օսմ. Պանֆային դիմացը

Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ